Ցողամարգ

Վարչական ղեկավար՝ Գնել Բարսեղյան

Հեռ: 077 31 75 55

Մակերես՝ 18.2 կմ^2

Բնակչություն՝ 576

Ինդեքս՝ 2810

barsexyangnel91@gmail.com

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, Աշոցքից 9կմ հարավ, մարզկենտրոնից գտնվում է 26կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Ճզըխլար, Ճզոլլար, Չըզըխլար, Չիզիխլար, Ցոխամարգ, Ցոխամարք անվանումները: Ցողամարգ է վերանվանվել 1946 թ-ին: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Տեղադրված է Աշոցք-Գյումրի ավտոմայրուղու վրա:

Գյուղը գտնվում է ալիքավոր բարձրադիր հարթավայրում՝ ծովի մակարդակից 1950մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Գյուղը զգալի տուժել է 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից, որի արդյունքում ավերվել են գյուղի տների մոտ կեսը:

Գյուղում և նրա շրջակայքում հայտնաբերվել են կիկլոպյան ամրոցի մնացորդներ (մ.թ.ա. I հազարամյակ): Ունի միջնադարի կանգուն եկեղեցի:

Գյուղի բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի, Սեբաստիայի շրջաններից 1829-1830թթ: 1831 թ-ին գյուղն ունեցել է 174, 1897 թ-ին՝ 877, 1926 թ-ին՝ 515, 1939 թ-ին՝ 807, 1959 թ-ին՝ 591, 1979 թ-ին՝ 477, 1989 թ-ին՝ 600 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 555 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ և կանայք ունեն նույն համամասնությունը՝ կազմելով 50-ական տոկոս: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. Մինչ աշխատունակներ՝ 28%, աշխատունակներ՝ 51%, հետաշխատունակներ՝ 21%: Ունի 119 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ՝ կաթնամսատուուղղությամբ, թռչնաբուծությամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը: